

դիւրացնէ քննադատի գործը: Առանձնապէս հետաքրքիր է նոցա վերնագիրների տարբերութիւնը: Այրիվանեցու տուած վերնագրից պէտք է եզրակացնել որ նա ինքը կամ Սարկաւագ վարդապետն է թարգմանել այս հատուածը «ի հոռոմոց գրոց» և որ յունարէնի մէջ սա նկատուել է իբրեւ շարունակութիւն Մնացորդաց Գրքի: Որովհետեւ միւս ձեռագիրը աւելի ուշ ժամանակից է՝ սպասելի էր, որ նա սորանից կախումն ունենար, բայց այդ ոչ մի կէտում էլ երևում է Այնտեղ գրուածքն աւելի նախնական տիպ ունի և աւելի համառօտ է: Նախնական պէտք է լինի նաև նորա Բարսեղ վերնագիրը, որովհետեւ այդպիսի մի գիրք երբեմն յայտնի եղել է. իսկ Մնացորդաց շարունակութիւն համարուել է նա յունարէնի մէջ երևի այն պատճառով, որ Հին Կտակարանում Մնացորդաց գրքերը վերջանում են այնտեղ, ուր Երեմիայի գուշակութիւնը գերեզարծի մասին կատարուում է Կիւրոսի միջոցով: Կարող էր վերջապէս մնացորդ բառը սկզբում իբրեւ ածական անուն գործածուած լինել և յետոյ մեզ ծանօթ գրքերի համար ընդունուել: պէտք է նկատել սակայն, որ Այրիվանեցու օրինակի մէջ այս հատուածից առաջ բերած է Մնացորդաց գրքի վերջին կտորը՝ ձեռագրի դատարարութեանը նայած բոլորովին անտեղի կերպով: Թերևս այդ 2 կտորները իրար մօտ գտել է Այրիվանեցին այն յունարէն օրինակի մէջ, որից իւր թարգմանութիւնն արել է:

Մահ ելէ՛մայի հատուածին գալով՝ այստեղ էլ մի օրինակը 920 հ. ճառքնորից է արտագրած և 923 հ. ի հետ համեմատած, իսկ միւսը Այրիվանեցու ճառքնորից: Սորանով մենք ամբողջացնել կամեցանք Երեմիա մարգարէի մասին մեր ձեռագիրներում պահուած յիշատակարանների թիւը և միանգամայն մասնագէտների ուշադրութիւնը հրաւիրել յատկապէս Մահ մարգարէից գրուած քի վերայ, որ ինչպէս Հայր Զարգանալեան էլ յիշում է*, յաճախ կրկնուում է մեր ճառքնորիցների մէջ՝ իւրաքանչիւր մարգարէի մասին իւր յիշատակի առթիւ. իսկ Այրիվանեցու օրինակում բոլորը մէկտեղ մէջ է բերած: Ինչպէս Հայր Զարգանալեան նկատում է, ես ևս չկորոզացայ ոչ մի տեղ օտար գրականութեան մէջ յիշատակութիւն գրանել զոցա մասին, սակայն բոլորովին անհիշելի եմ համարում նորա կարծիքը (զոնէ

մեր հրատարակած կտորի նկատմամբ, առ այժմ չեմ համեմատել և չեմ կարող տեսել թէ արդեօք բոլորը նոյն հեղինակի գործ է) «Թէ ի մերոց յօրինուած ըլլան»: Այստեղ կան տեղեկութիւններ, որ մերայինք ոչ մի տեղից առնել չէին կարող գաղափարներ (օր. նեոի գաղափարը), որ Յայտնութեան գրականութեան, քրիստոնէական առաջին դարի տիպն են կրում: Առանձնապէս հետաքրքիր է այստեղ Ուխտի տապանակի մասին բերած աւանդութիւնը, որ ըստ Երեմիա 3 ԳԼ. 16 հ.՝ այս մարգարէի ժամանակ արդէն հաւանականօրէն գոյութիւն չուներ:

«Արարատը» այս համարից սկսած կունենայ իւր յաւելուածը, ուր կտպագրուին հետզհետէ հատուկտորներ Մայր Աթոռի ձեռագիրներից՝ առ այժմ որքան կտրելի է հնագոյն յիշատակարաններ:

Կարապետ Ղարապետ:



ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

1. ԿԱԹՈՒԿ ԵԿԵՂԵՅԻ.

Աթոռիկութեան հաւատարիմ Աւստրո-Հունգարիան սկսել է հոգսեր պատճառել Հռոմի քահանայապետին, Անցեալ տարուան ընթացքում Հունգարիայում նոր ընդունուած օրինագծերը, որ վերաբերում են ամուսնալուծութեան և քաղաքական ամուսնութեան գրգռել են Հունգարիայի եպիսկոպոսներին, որոնք այդ առթիւ դիմել են պապին: Պապը երկար ժամանակ տատանուելուց յետոյ մարտի 6-ին եկեղեց. ժողովի մէջ (Consistorium) արտայայտեց իւր կարծիքը, որ ապա մարտի 8-ին հրատարակուեց, Պապը իւր ճառի սկզբում դատապարտում է հունգարական նոր օրէնքները ամուսնութեան և ամուսնալուծութեան վերաբերութեամբ: Պապի կարծիքով քաղաքական իշխանութեան իրաւունքն է որոշել ամուսնութեան նշանակութիւնը քաղաքական կեանքի համար, բայց եկեղեցուն է պատկանում այն վճիռների իրաւունքը, որ վերաբերում են ամուսնութեան կապին, որովհետեւ Քրիստոս իրաւունք է տուել եկեղեցուն պսակը ճանաչել իբրեւ խորհուրդ:

— Եթէ պապի յարաբերութիւնները Աւստրո-Հունգարիայի հետ նոր են սկսել վատանալ, Իտալիայի հետ նա, այսպէս ասելը, անընդհատ պատերազմի մէջ է: Սկսած 1870 թ. երբ Հռոմը մայրաքաղաք դարձաւ նորածին Իտալիայի և խլուեցաւ

* Հայկական Թարգմանութիւնը Նախնեաց, 1889. եր. 486:

պապից, Հռոմի քահանայապետները թշնամական գիրք բռնեցին դէպի իտալական կառավարութիւնը: Այդ թշնամութեան հետեւեալքն այն էր, որ պապերն արգելեցին կաթոլիկներին մասնակցել քաղաքական կեանքին: Այս արգելքի շնորհիւ Իտալական ազգի մի ստուար մասը հեռու է պահում իրեն ազգային ընտրութիւններից: Այս վիճակը ծանր է թուում նոյն իսկ Իտալիայի կառավարութեան և վերջին ժամանակներս Կրիսպին, Իտալական կառավարութեան գլուխը մի քանի զիջումներ արաւ եկեղեցուն, Սակայն զուր անցաւ այդ բարեկամութեան ջանքը: որովհետեւ Հռոմը սովոր չէ կէս միջոցներով դոհ լինել: պապը իւր մարտի Գի ճառի մէջ այս խնդիրն ևս յիշեց, յայտնելով որ աշխարհական կառավարութեան արած քայլի շնորհիւ որով նա վիճակաւոր եպիսկոպոսների իրաւունքը ծանաչեց, շփոթութիւնը վերացաւ: սակայն դրանով չը փոխուեցաւ իւր վիճակը, որ անվայել է իւր կոչման ու պաշտօնին և որի հետ նա չէ կարող հաշտուել:

— Աւերջապէս Կաթոլիկ արժանացաւ հայ կաթոլիկների պատրիարք գերապայծառ Ազարեան եպիսկոպոսը: Լրագիրներն հաղորդում են, որ գեր. Ազարեանին պապը կարգինալների (ծիրանաւոր) շարքն է ընդունել և այդ առթիւ կոչել է նրան Հռոմում Հասունի դպիրներին հասաւ արդ և Ազարեանը, ցանկալի է, որ սա էլ Հասունի նման Հռոմում ծառայէր ի փառս պապին...

— Պապը ջերմ կերպիւ հետևում է եկեղեցիների միութեան խնդրին, Հռոմում ամենակարող յիսուսեանները դժգոհ են պապի արած զիջումներից, ուստի և պապն էլ մտադիր է մի նոր քարոզութեան դպրոց (Propaganda fides) հիմնել:

2. ԹՐԹՈՂՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՆ.

1. ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԻՒՆ.

Նորընտիր Անթիմոս Է. պատրիարքը փետր. 6-ին ժամանելով Կ. Պօլիս՝ մեծ հանգիստով ընդունուելուց յետոյ առաջին անգամ փետր. 19. պատարագ է մատուցել խուռն բազմութեան առաջ, Ժողովրդի համակրութիւնը շատ մեծ է: ամէնքն ևս յոյս ունին, որ նոր պատրիարքը կարող կը լինի իւր եկեղեցու շահերը արժանապէս պաշտպանել:

— Կ. Պօլսի հայոց և յունաց պատրիարքները միմեանց փոխադարձ այցելութիւններ են արել և առանձին սիրոյ և համակրանքի նշաններ ցոյց տուել: Լրագիրները թղթակցութիւններից պարզ երևում է, որ այդպիսի սիրոյ ձգտումն այժմ կայ Պօլսում և Ժողովրդի մէջ. յոյներն և հայերը սկսում են հաս-

կանալ, որ իրենց շահերն ընդհանուր են և ոչ զանազան:

ՆՐՈՒՍԱՂԵՄԻ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԻՒՆ.

Նրուսաղէմի յունաց պատրիարքի նախաձեռնութեամբ այս տարի մի օրթողոքս եկեղեցի է բացուել Աւստրալիայում: Մալբուրն քաղաքում կային ցարդ բազմաթիւ յոյներ, ասորիք, ռուսներ, որոնք առանց եկեղեցու և հովուի էին, այժմ շնորհիւ ռուսական նախկին հիւպատոս Պոնտիասիի հիմնուեցաւ առաջին օրթողոքս եկեղեցին Աւստրալիայում:

Ն. Բ.



ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

ՀԱՆՆԵՆՈՒԿՆԵՐ ՏՐԱՊԵԶՈՐՆԻ ԳԻՒՂԱՑՈՑ ՌԱՐԱՌՈՎ.

Աշխարհի ժողովը՝ հասնի կու

Հաւի աղբիւն չկարի հասնիւ. — Համապար,

Այլ մը կուգայ մոմաւի

Գօտին հիտը շնչընկալի. — Զք. դպի գառաւը:

Այտ մը ունիմ ամի (եղք) շունի,

Մէջի սօրըը հոմաւը՝ շունի. — Աստեղ:

Բարակ ծաղ մոնիմ:

Աշխարհը սիրունցնէ կու. — Ասեղ,

Դառնաւ կու, դառնաւ,

Ջօնի դառնայ, քօքի կու՝ — Մաստր որոյ վե-
րան բէլ կը փաթարեն:

Դարակ, դարակ դաստարակ

Կէսը գոյծուած՝ կէսը գոյծելու. — Չեղ և մատեն,

Դար ալտիկն՝ կծկեցուցի

Էրկու մատի ծովկեցուցի. — Բիթը մաքրէլ խէլով,

Նիս կեշտում էն կէշտայ,

Ըն ինծիկի մէնէ առաջ կեշտայ. — Շոք:

Ըն ինչինէ, էմն թօնի վրայ տրուի կու. — Անու,

Ըսդին դար, էնդին դար՝

Մէջը ընդադար (անդադար) — Ժողոց երեխայ,

Շոտուն ու երկու աղջիկ էինք,

Մահէն զայնուցօնք,

Կենէ նշոնք շարունցօնք. — Սահեբք:

Ըրկէն էրեց՝

Ազունի՝ ցոնք. — Կուէի և Կի:

Թափէ թափիւ է,

Պահար կիւմնէ է,

Օչ էրկունց է,

Օչ գետնուց է,

Աշխարհիս էրկուն է. — Արեգակ,

Ինքը նիսլ գլօնը դուս. — Գամ:

1. Երայր: 2. Համաւնք. 3. յիս: 4. Կողմ: 5. Գոգիւ: 6. Գոգիւ: 7. Կիւմն: 8. Կուէի: 9. Կի: 10. Կի: 11. Կի: 12. Կի: 13. Կի: 14. Կի: 15. Կի: 16. Կի: 17. Կի: 18. Կի: 19. Կի: 20. Կի: 21. Կի: 22. Կի: 23. Կի: 24. Կի: 25. Կի: 26. Կի: 27. Կի: 28. Կի: 29. Կի: 30. Կի: 31. Կի: 32. Կի: 33. Կի: 34. Կի: 35. Կի: 36. Կի: 37. Կի: 38. Կի: 39. Կի: 40. Կի: 41. Կի: 42. Կի: 43. Կի: 44. Կի: 45. Կի: 46. Կի: 47. Կի: 48. Կի: 49. Կի: 50. Կի: 51. Կի: 52. Կի: 53. Կի: 54. Կի: 55. Կի: 56. Կի: 57. Կի: 58. Կի: 59. Կի: 60. Կի: 61. Կի: 62. Կի: 63. Կի: 64. Կի: 65. Կի: 66. Կի: 67. Կի: 68. Կի: 69. Կի: 70. Կի: 71. Կի: 72. Կի: 73. Կի: 74. Կի: 75. Կի: 76. Կի: 77. Կի: 78. Կի: 79. Կի: 80. Կի: 81. Կի: 82. Կի: 83. Կի: 84. Կի: 85. Կի: 86. Կի: 87. Կի: 88. Կի: 89. Կի: 90. Կի: 91. Կի: 92. Կի: 93. Կի: 94. Կի: 95. Կի: 96. Կի: 97. Կի: 98. Կի: 99. Կի: 100. Կի: